ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 հունիսի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

74
(2924)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԲՈՒՔՄԵՅՔԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԵՎ ԹԻՄ ՈՒՆԻ

Տպավորություն է՝ կարծես հայկական ֆուտբոլում քաոս է, որը գնալով խորանում ու անկառավարելի է դառնում: Հայաստանի առաջնության այս տարվա հաղթող Երեւանի «Փյունիկ»-ը հայտարարում է, որ խաղադաշտի, մարզումների խնդիր ունի եւ ստիպված է դիմել ՈՒԵՖԱ՝ Վրաստանում խաղերն անցկացնելու թույլտվություն ստանալու համար. բրոնզե մեդալակիր «Արարատ Արմենիա»-ն եւս, կարծես թե, լուրջ խնդիրներ ունի ֆեդերացիայի հետ, քանզի Հայաստանի գավաթը նվաճելուց հետո՝ պաշտոնական միջոցառման ժամանակ, գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը հրաժարվեց պարգեւ ընդունել ֆեդերացիայի նախագահի ձեռքից եւ, ըստ շրջանառվող լուրերի, այժմ ֆեդերացիայից պահանջում են թիմի ղեկավարությունից հեռացնել Մինասյանին, այլապես նրանք էլ «կարժանանան» «Փյունիկի»-ի ճակատագրին: Ավելին՝ առժամանակ առկախվել է ՀՖՖ տեխնիկական կենտրոն-ակադեմիայի մի հատվածի հնարավոր վաճառքը կամ փոխանցումը «Արարատ Արմենիային», ինչի մասին խոսել էին տվյալ թիմի ղեկավարները՝ ըստ էության հաստատելով, որ նման բանակցություններ ընթանում են: Ինչ վերաբերում է արծաթե մեդալակիր «Նոա» ակումբին, ապա ֆուտբոլային որոշ մասնագետներ կարծում են, որ այն ամեն վայրկյան կարող է լուրջ խնդիրներ ունենալ, քանի որ ՈՒԵՖԱ-ն եւ ՖԻՖԱ-ն պայքարում են բուքմեյքերական ընկերությունների՝ ֆուտբոլում աճող ազդեցության դեմ ու վարում են քաղաքականություն, որն ուղղված է վերջիններիս ֆուտբոլից դուրս մղելուն եւ այն «մաքուր» պահելուն, ինչն ավտոմատ նշանակում է, որ այս ակումբը, շատ հավանական է, որ կունենա խնդիրներ: Չի բացառվում նաեւ, որ «Նոա»-ի խոցելի լինելը կարող է օգտագործվել ֆեդերացիայի ղեկավարության կողմից՝ թիմը «կանտրոլի» տակ պահելու համար:

Հիշեցնենք, որ «ՆՈԱ» ակումբի նախագահը Վարդգես Վարդանյանն է, ով «Դիջիթեյնի» հիմնադիրն է, որը մինչեւ 2017 թվականը կոչվում էր «Տոտո Գեյմինգ»:

ՀԳՀՖԲ-ն ներկայիս ղեկավարները, որոնք նախկին լրագրողներ են, կառույցը դարձրել են շատ փակ ու անհասանելի լրագրողներիս համար: Մենք չենք ստանում ոչ հարցումներ, պատասխաններ, ոչ ունենում ենք բանավոր հարցադրումների հնարավորություն:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի ծնողների համար առանձնատուն կառուցելու գործընթացի օրինականությունը ստուգում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ Արտակ Պողոսյանը, որն անձամբ է ղեկավարում կառույցի օպերատիվ գործողությունները: Ինչպես հայտնի է, Հակակոռուպցիոն կոմիտեում «Հետքի» հրապակումից հետո ստուգումներ են սկսվել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի ծնողների առանձնատան կառուցման փաստով: Տեղեկությունը ArmLur.am-ին հայտնել էին հակակոռուպցիոն կոմիտեի մամուլի ծառայությունից: Հիշեցնենք, որ մինչ նախարար դառնալը՝ արտագնա աշխատանքով զբաղվող (խոպանչի) Սանոսյանի թոշակառու մայրը մոտ 230 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ առանձնատուն է կառուցում: Սանոսյանի խոսնակ Սոնա Հարությունյանը նախարարի անունից հայտնել էր, թե առանձնատունը կառուցում են Սանոսյանի եղբայրները, եւ այնտեղ կոռուպցիա փնտրելը զուր ջանք է, բայց նա այդպես էլ չէր պարզաբանել՝ մինչեւ նախարար դառնալը, երբ Սանոսյանն էլ եղբայրների հետ արտագնա աշխատանքով էր զբաղվում, ինչու 3 եղբայր միասին չէին կարողանում մինչեւ 2018 թվականը մայրաքաղաքում առանձնատուն կառուցել: Հուսանք՝ այս գործը մինչեւ վերջ կքննվի, այլ ոչ թե մյուս աղմկահարույց դեպքերի նման «ծածկադմբոց» կարվի:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանի գլխավորած՝ Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հարցերով հանձնախումբը օրերս կրկին մեկնել է Եվրոպա՝ արտագնա հանդիպումների: Օրակարգը նույնն է՝ արցախցիների՝ Արցախ վերադարձի համար միջազգային երաշխիքներ ստանալը: Հանձնաժողովի կազմում ներգրավված են նաեւ ՀՅԴ հայ դատի Եվրոպայի գրասենյակի ղեկավար Գասպար Կարապետյանը, նույն կուսակցությունից Մարիո Նալբանդյանը, Արցախի ՄԻՊ Գեղամ Ստեփանյանը, հանրապետական նախկին պատգամավոր Կարեն Բեքարյանը: Արտագնա հանդիպումներից հետո Վարդան Օսկանյանը կրկին կհանդիպի Արցախի կառավարության անդամների եւ պատգամավորների հետ: Ինչպես ArmLur.am-ը ավելի վաղ հայտնել էր, Վարդան Օսկանյանի եւ Արցախի իշխանությունների նախորդ հանդիպման ժամանակ, որը մայիսի 6-ին էր կայացել, Օսկանյանը գնահատել էր հանդիպման արդյունքները՝ միեւնույն ժամանակ նշելով, որ դեռ շատ աշխատանք կա անելու ցանկալի արդյունքի հասնելու համար:



«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, նախկին հաղորդավար Լուսինե Բադալյանը՝ Լուլուն, ֆինանսական վիճակը այս տարի եւս բարելավել է: Լուսինե Բադալյանը քաղաքական կարիերան սկսել է 2018-ից՝ ԱԺ պատգամավոր ընտրվելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համապետական ընտրական ցուցակով: 2023 թվականի հայտարարագրում պատգամավորի՝ Ազգային Ժողովի աշխատակազմից ստացված եկամուտները նախորդ՝ 2022 թվականի համեմատ ավելացել են գրեթե 2 մլն դրամով՝ 8 մլն 320 հազար դրամից դառնալով 10 մլն 508 հազար դրամ: Լուսինե Բադալյանի հաշվետու տարվա եկամուտներն ընդհանուր առմամբ ավելացել են նախորդ տարի, քանի որ պատգամավորն ԱԺ-ից ստացել է նաեւ 3 մլն դրամ այլ եկամուտ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ պատգամավորը Արարատի մարզի Այնթափ համայնքում ունի համատեղ սեփականության իրավունքով ձեռք բերված հողամաս, նաեւ Աջափնյակ վարչական շրջանում, կրկին համատեղ սեփականության իրավունքով բնակարան՝ ձեռք բերված 2013 թվականին: ՔՊ-ական պատգամավորն ունի նաեւ մեկ այլ բնակարան, որը նրա հայտարարագրում արտացոլվել է դեռեւս 2022 թվականին: ԱԺ պատգամավորի լրացրած տվյալներից հասկանում ենք, որ նրա կողմից ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 47 մլն 900 հազար դրամ: Հենց այս բնակարանի համար Լուսինե Բադալյանը ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացել է 2 մլն 523 հազար դրամ, որը եկամտահարկի վերադարձի օրենքով բնակարանի հիփոթեքի տոկոսադրույքները վճարելու համար է: ՔՊ-ական պատգամավորը մեքենա չունի: Պատգամավորի կանխիկ դրամական միջոցները կազմել են 6 հազար 300 դոլար եւ 4 մլն 900 հազար դրամ, բանկային հաշիվների մնացորդները՝ 711 հազար դրամ: 2022 թվականի համեմատ նրա դրամական միջոցները զգալի ավելացել են՝ 2 հազար 300 դոլարով եւ 1 մլն 400 հազար դրամով, իսկ բանկային հաշիվների մնացորդները՝ 513 հազար դրամով: ***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

ԶՐՈՒՅՑ

ՀՀ-ՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՂԵՏԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով երկրում առկա բազմաբնույթ խնդիրները, երկրի արտաքին եւ ներքին քաղաքականության ուղիղ կապը երկրի տնտեսության հետ՝ «Ժողովուրդ» օրաթերթը այսօր զրուցել է վերլուծաբան, տնտեսագետ Գագիկ Մակարյանի հետ:

Տնտեսագետի հետ զրուցել ենք մայիսի 26-ին տեղի ունեցած աղետից, անշարժ գույքի ոլորտում տիրող իրավիճակից եւ այլ հուզող եւ ակտուալ թեմաներից:

-Պարոն Մակարյան, այսօր կցանկանամ խոսենք մայիսի 26-ին Լոռու եւ Տավուշի մարզերում տեղի ունեցած աղետից: Շատերը նշում են, որ դա բնական աղետ էր, շատերն էլ կարծում են, որ այն մարդածին է եղել, քանի որ նշում են, թե ինչ որ քարաթափում է եղել, որը լցվել է ջրամբարները, ինչից էլ ամեն բան սկիզբ է առել: Խնդրում եմ մեկնաբանեք, թե ըստ Ձեզ՝ սա մարդածի՞ն, թե՞ բնական աղետ է:

-Ակնհայտ է, որ դա աղետ է, սակայն ծագման աղբյուրը դեռեւս հայտնի չէ: Դա պիտի ուսումնասիրեն համապատասխան մարմինները: Շատ դեպքեր կան, երբ ժամանակ առ ժամանակ կարող են ֆորս-մաժորային իրավիճակներ առաջանալ բազմաթիվ անփութությունների եւ սխալների հետեւանքով: Օրինակ՝ նախկինում եղել են պայթյուններ, երբ «Նաիրիտ» գործարանն էր աշխատում, կամ զենքի պահեստների հետ կապված խնդիրներ, ջրամբարների, հիդրոկայանների եւ տարբեր նմանատիպ երեւույթներ, բայց ամենակարեւորն այն է, թե պետությունը կամ համայնքը, որտեղ դեպքը տեղի է ունենում, իր առաջին արձագանքման կարողություններով որքանո՞վ է համապատասխանում հարցերի կարգավորմանը:

Մենք նկատեցինք, որ առաջին օրերին խուճապ կար մի քիչ: Հայաստանում նման երեւույթներ, ջրի հետ կապված խնդիրներ չէին եղել, այլ աղետներ եղել են, բայց ո՛չ ջրային. եւ մաշստաբը բավականին մեծ էր: Կարծում ենք, որ հակառակ փորձի պակասին՝ կառավարության մի շարք ենթակառուցվածքներ կարողացան տիրապետել իրավիճակին: Արտակարգ իրավիճակներին պատրաստվելը շատ կարեւոր խնդիր է:

Մենք հիմա էլ նկատում ենք, որ արտակարգ իրավիճակներում բացակայում են եւ ներառված չեն գործատուները, որոնց հետ պետական մարմինները կարող էին աշխատանք տանել, որպեսզի նրանք էլ իրենց անձնակազմերին զգուշացնեն, նախապատրաստեն եւ ուսուցանեն, իրենք ներգրավված լինեն սեփական տեխնիկայով, հումքով, սնունդով: Մյուս կողմից էլ քաղաքացիները. պետական մարմինները հաճախ սիրում են հարցերը ինքնուրույն լուծել, եւ այդ ընթացքում ոտքները քարին է դեմ առնում, ինչպես որ հիմա է:

Եվ ինչ ստացվեց: Այսպես երկարում է գործընթացը, մահացության դեպքեր, տուժած քաղաքացիներ, տուժած փոքր բիզնես:

Այս հարցում պետական աջակցությունը շատ կարեւոր է, ինչը շատ ծախսատար չէ: Իմ հաշվարկով՝ մոտ 2 միլիոն դոլար է պետք բիզնեսն ու քաղաքացիներին փոխհատուցելու համար, քանի որ քաղաքացիներն էլ իրենց ունեցվածքն են կորցրել, կահույք, տան վերանորոգություն եւ այլն: Այդ ամենը միասին հնարավոր է մոտ 2 միլիոնի ծախս լինեն: Այսինքն՝ պետության համար այսօրվա պայմաններում, երբ բյուջեն զգալի գումարներ է ստանում, լավ կլինի այդ հարցը լուծվի: Հակառակ դեպքում կլինի մնացորդային դժգոհություն ուղղված պետության դեմ, որը կամ միգրացիայի հիմք կլինի, կամ դժգոհության:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԿԱՐԵՎՈՐ ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՇԱՐԺՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՓՈՒԼԵՐԸ

Շարժման ընթացքը. որտեղ ենք, եւ ինչից է պետք խուսափել.

● Իշխանությունը գնում է մարման. սա հուշում է հավաքական փորձառությունը եւ շարժման ընթացքը:

● Ամենադժվար փուլը հաջողել է. ստեղծվել է զգալի կայուն կորիզ: Հայաստանում ձեւավորվել է նոր խոշոր ընտրազանգված, որի պահանջը խորքային փոփոխությունն է:

● Շարժումը մի քանի ճշգրիտ ձեւակերպումների շնորհիվ արտաքին աշխարհի համար սկսել է ընկալվել որպես Հայաստանի ներքին գործ, որը սպառնալիք չէ տարածաշրջանի համար:

● Շարժումը թակել է ամենամեծ ընտրազանգվածի՝ մշտական դիտորդների, տատանվողների դուռը. եւ այդ դռները սկսում են բացվել:

Այսպիսով՝ ունենք դրական ալիքի վրա ընթացող շարժում, որն ունի թափ հավաքելու մեծ պոտենցիալ: Եվ եթե չանենք կոպիտ սխալներ, հենց այդպես էլ լինելու է:

Ինչ է անում իշխանությունը. փորձում է պահել իր իշխանությունը: Ինչպե՞ս.

● Հակաքարոզչություն (Արվում է առավելագույնը, արդյունքը խիստ սահմանափակ է)

● Բիրտ ուժ, ռեպրեսիաներ (արվում է եւ արվելու է, բայց սա ունի իր հակաթույնը, որի մասին՝ հաջորդ անգամ):

● Սպասում է շարժման սեփական սխալներին (ամենավտանգավորը սա է, եթե չլինեն այդ սխալները կամ հասցվեն հնարավոր մինիմումին, իշխանության դիմադրելու ռեսուրսները մաշվելու-վերջանալու են):

Շարժման պարտությունն ամբողջ հասարակության պարտությունն է, հետեւաբար՝ այն պետք է հաղթի

● Թրենդը պետք է մնա նույնը. դրական ալիքն ունի աճելու զգալի պոտենցիալ: Պետք է գնալ հենց այդ ուղղությամբ:

● Շարժումը չպետք է վերածվի ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ: Համաժողովրդական շարժումն իր հանդարտությամբ, համառությամբ, հաշտության հաստատակամությամբ, իր բովանդակությամբ, կադրերով, ծրագրերով, ապագայի տեսլականով, պատրաստվածությամբ, հանրային ահռելի ճնշման ալիքով պետք է վերածվի իշխանության: Սա հանրային առողջացման պրոցես է, ոչ թե քաղաքական պայքար: Այստեղ «եթե» չկա. շարժման պարտությունը հերթական ընդդիմության պարտությունը չէ, այն ամբողջ հասարակության ու մեր հեռանկարի պարտությունն է:

● Պետք է ընդունենք նաեւ, որ հասարակության մեջ կան կարեւոր հարցեր, որոնց շարժումը դեռ չի անդրադարձել (սոցիալական թեմաներ, սոցիալական արդարության հարցեր, համակեցության խնդիրներ եւ այլն, որոնք կան հանրային հավաքական մտքում, եւ սրանք պատասխանների են սպասում): Դրանք այն հարցերն են, որոնք կարող են շարժման շուրջ մարդկային եւ հանրային համախմբման նոր ռեսուրս ստեղծել: Իսկ սա արդեն ֆիզիկա է, ոչ թե քաղաքագիտություն: Նման ճնշմանը ոչ մի իշխանություն չի դիմանա:

● Իշխանության ամենագործուն լծակը բերետավորն է: Շարժումը պետք է ամեն կերպ զրկի իշխանությանն այդ գործիքը կիրառելու հնարավորությունից: Նախորդ շաբաթներին Սրբազանն ունենում էր բազմաթիվ կարեւոր հանդիպումներ սոցիալական եւ մասնագիտական շրջանակի հետ, խոսում էր կարեւորագույն թեմաներից եւ տալիս էր կարեւոր ուղերձներ՝ հասարակությանը եւ արտաքին աշխարհին: Նիկոլ, ըստ էության, Երեւանում եւ երկրում չկար, դա էր ընթացքը, եւ դա էր շարժման թափ հավաքելու պատճառը: ՄԵԿ հոգին զրկված էր իր սիրած գործիքը՝ բերետավորին օգտագործելու հնարավորությունից: Իշխանական հակաթեզերը արհեստական էին ու չաշխատեցին: ՄԵԿ հոգին դա ֆիքսեց: Իշխանությունը մոտ տասը օր չգիտեր՝ ինչ աներ: Այս պայմաններում իշխանությունը երազում է, որ դու ստեղծես հնարավորություն, թույլ տաս, որ նա կիրառի իր միակ զենքը՝ բերետավորին: Շարժման խնդիրն է՝ այս պահին սա թույլ չտալ:

Վահե Հովհաննիսյան
Այլընտրանքային նախագծեր խումբ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻՑ

Տեղատարափ անձրեւների հետեւանքով Հայաստանի հյուսիսային շրջաններում առաջացած ջրհեղեղները մարդկային զոհերի եւ խոշոր նյութական վնասների պատճառ են դարձել: Ավելի քան 400 մարդ տարհանվել է: Բազմաթիվ ենթակառուցվածքներ, մասնավորապես ճանապարհներ եւ կամուրջներ, ինչպես նաեւ գազատարներ եւ ջրամատակարարման համակարգեր, վնասվել կամ շարքից դուրս են եկել: Որոշ գյուղերում տներ են փլուզվել, իսկ ցեխը եւ ջուրը գրեթե երկու մետր բարձրացել են:

Հաշվի առնելով աղետի ծավալները՝ Հայաստանի իշխանությունները օգնություն ստանալու նպատակով դիմել են Եվրամիության քաղաքացիական պաշտպանության (EUCPM) համապատասխան մեխանիզմներին՝ խնդրելով մասնավորապես գործուղել քաղաքացիական շինարարության ոլորտի ճարտարագետներ:

Շվեյցարիան անմիջապես արձագանքել է այս խնդրանքին՝ առաջարկելով համապատասխան օգնություն: Ստանալով Հայաստանի իշխանությունների դրական պատասխանը եւ շահագրգռությունը՝ Շվեյցարական զարգացման եւ համագործակցության գործակալությունը (SDC) Հայաստան է գործուղում Մարդասիրական օգնության կորպուսի (SHA) ութ մասնագետ, այդ թվում՝ ճարտարագետներ եւ տեխնիկական մասնագետներ: Նրանք Շվեյցարիայից Հայաստան են մեկնել երեկ երեկոյան՝նպատակ ունենալով աջակցելու Հայաստանի իշխանություններին՝ վնասված կամուրջների եւ այլ ենթակառուցվածքների գնահատման հարցում:

Շվեյցարական զարգացման եւ համագործակցության գործակալությունը (SDC), որ արդեն իսկ ներկա էր Հայաստանում եւ Հարավային Կովկասում, հրատապ արձագանքման այս ծրագրի համար նախատեսել է մինչեւ 500 000 շվեյցարական ֆրանկ աղետի գոտում, որը նաեւ երկրի ամենակարիքավոր շրջանների թվում է: Միաժամանակ Շվեյցարիան շարունակում է ուշի-ուշով հետեւել Եվրոպայում եւ հարեւան երկրներում հեղեղումների իրավիճակին: Շվեյցարիան պատրաստ է արագ արձագանքելու յուրաքանչյուր օգնության դիմումի:

ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ԵՆ ՀԱՄԱՏԵՂ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 4-ին Բաքվի մոտ տեղի են ունեցել «Կովկասյան արծիվ-2024» համատեղ զորավարժություններ՝ Ադրբեջանի, Թուրքիայի եւ Վրաստանի հատուկ նշանակության ուժերի մասնակցությամբ: Այս մասին տեղեկացրել են ադրբեջանական ԶԼՄ-ները:

Բացման արարողությանը ներկա էր Ադրբեջանի ԶՈՒ հատուկ նշանակության ուժերի հրամանատարի պաշտոնակատար, գեներալ Ակիֆ Փիրվերդիեւը:

Մասնակիցների թվաքանակի, ժամկետների եւ ծրագրի մասին չի տեղեկացվում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՄՆ-Ն ԹՇՆԱՄԱԿԱՆ ԵՐԿԻՐ Է ՌԴ-Ի ՀԱՄԱՐ

ԱՄՆ-ն այժմ թշնամական երկիր է Ռուսաստանի համար, ինչպես Ռուսաստանը՝ ԱՄՆ-ի համար: Այս մասին ճեպազրույցում ուշադրություն է հրավիրել ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը՝ մեկնաբանելով ԱՄՆ Պետդեպարտամենտի մերժումը երկրից դուրս թողնել նախկին հետախույզ Սքոթ Ռիտերին՝ Սանկտ Պետերբուրգի միջազգային տնտեսական ֆորումին մասնակցելու համար:

Պեսկովը նշել է, որ հետախուզական ծառայության նախկին աշխատակիցները կարող են ենթարկվել ճանապարհորդության սահմանափակումների «հատկապես թշնամի երկիր» մեկնելու դեպքում:

«Եվ հիմա մենք նրանց համար թշնամի երկիր ենք, ինչպես իրենք են մեզ համար»,- նշել է Կրեմլի ներկայացուցիչը:

ՀԱՆԲԱՀԱՎԱՔ՝ ՍՈԹՔՈՒՄ

Հունիսի 4-ին Սուրբ Աննա եկեղեցու բակից Բագրատ Սրբազանը հայտարարեց, որ կմեկնեն Վարդենիս: «Սոթքում ժամը 6-ին հանրահավաք ունենք: Ուզում եմ՝ Սոթքում լինի, որովհետեւ սահմանի ակնառու վայրն այդտեղ է»,- ասաց նա:

Սրբազանը նշեց, որ առաջիկայում կլինեն նաեւ Սյունիքում, սակայն չհստակեցրեց, թե դա երբ կլինի:

«Սյունիք գնալու խնդիրը դեռ պետք է ժամանակային առումով լուծենք, քանի որ այստեղ՝ Երեւանում, շատ կարեւոր գործառույթ ունեմ անելու, շատ-շատ կարեւոր է դա, այս ամբողջ ընթացքի մեջ, երեւի թե ամենակարեւորներից մեկն է», - ասաց նա:

Ի դեպ, հայտարարեցին, որ կողմնակիցներից մեկին երթի ընթացքում ոստիկանները «գողացել են»:

«Ում մի քիչ հեռացած տեսնում են՝ տանում են», - ասաց երթի մասնակիցներից մեկը:

ՀՀ-ՖԻՆԼԱՆԴԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղի է ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցը Ֆինլանդիայի նախագահ Ալեքսանդր Ստուբի հետ:

Զրուցակիցները քննարկել են Հայաստան-Ֆինլանդիա հարաբերությունների հետագա զարգացմանն ու ընդլայնմանը վերաբերող հարցեր: Մասնավորապես՝ կարեւորվել է տնտեսական փոխգործակցության ընդլայնման ուղղությամբ հետեւողական քայլերի իրականացումը:

Նիկոլ Փաշինյանը եւ Ալեքսանդր Ստուբն անդրադարձ են կատարել Հայաստան-Եվրոպական միություն համագործակցության խորացմանը, մեր երկրում իրականացվող ժողովրդավարական բարեփոխումներին, ինչպես նաեւ Հայաստան-Ադրբեջան խաղաղության գործընթացին եւ տարածաշրջանային անվտանգությանը վերաբերող հարցերի:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԲԱՐՁՐԱՑԵԼ Է Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին կուռք դարձրած Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը, որ ստորագրում է Նիկոլ Փաշինյանի ամեն խոսքի տակ, այս անգամ «ուղուց շեղվել» է:

Վարչապետը հայտարարում էր, որ ՀՀ ինքնիշխան տարածքը 12 հազար 743 քառ. կիլոմետր է, իսկ Առուշանյանը MediaHub-ի հետ զրույցում ասել է, որ իր համար Հայաստանի Հանրապետության սահմանը Մեծ Հայքի քարտեզն է՝ 15 նահանգներով եւ 641 հազար քառակուսի կիլոմետրով:

Առուշ Առուշանյանը 2008 թվականի օգոստոսից հիմնադրել է «Գոր Մետալ» ՍՊԸ-ն եւ զբաղվել է ձեռնարկատիրական աշխատանքներով: Համայնքի ղեկավար է ընտրվել 2017 թվականի նոյեմբերի 5-ին, ապա 2021 թվականի հոկտեմբերի 17-ին համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով հերթական ընտրության արդյունքում կրկին ընտրվել է համայնքի՝ համամասնական ընտրակարգով համայնքի ղեկավար:

Ինչեւէ, անդրադառնալով Առուշ Առուշանյանի 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրին՝ արձանագրում ենք, որ նախորդ՝ 2022 թվականի հայտարարագրի համեմատ Գորիսի համայնքապետի աշխատանքի վարձատրությունն ավելացել է:

Առուշ Առուշանյանը 2022 թվականի հաշվետու տարում ստացել է տարեկան 2 մլն 152 հազար դրամ աշխատանքի վարձատրություն՝ ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքապետարանի աշխատակազմի կողմից, իսկ 2023 թվականի հայտարարատու տարում ստացել է 2 մլն 778 հազար դրամ աշխատանքի վարձատրություն:

Ստացվում է, որ Առուշանյանի աշխատանքի վարձատրությունը մեկ տարում ավելացել է 600 հազար դրամով. եթե առաջ Առուշանյանն ամսական ստանում էր գրեթե 179 հազար դրամ, ապա այժմ ամսական ստանում է 231 հազար դրամ:

Առուշանյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 268 հազար դրամ, իսկ նախորդ տարվա կանխիկ դրամական միջոցները՝ 300 հազար դոլարը, 100 հազար եվրոն եւ 210 մլն դրամը նվազել են՝ դառնալով 300 հազար դրամ, 100 հազար դրամ եւ 210 մլն դրամ:

Հարցական է, թե ինչու են հայտարարագրում նույն թվերը պահպանվել, սակայն փոխարժեքն այս անգամ դրամով է ներկայացրել:

Առուշանյանի հայտարարագրում բացակայում է ծախսերի մասին հատվածը:

Առուշ Առուշանյանի տրանսպորտային միջոցը, որը բոլոր տարիների հայտարարագրերում առկա է պահպանվել՝ZIL մակնիշի 1930 թվականի արտադրության մեքենան է, որը գնվել է 2016 թվականին:

Առուշանյանի անշարժ գույքերը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել: Պահպանվել է Գորիս համայնքում գտնվող 2 հողամասը, որից մեկը 2019 թվականին համայնքապետը նվիրատվություն է ստացել: Պահպանվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն նոր կառուցված, ձեռք բերված եւ անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված այն շինությունները եւ արտադրական նշանակության շինությունը, որոնք կրկին գտնվում են Գորիս համայնքում:

Հարցական է, թե այս ունեցվածքի ֆոնին Առուշ Առուշանյանի, որ արժանիքի համար է նրա աշխատանքի վարձատրությունն ավելացել ՀՀ պետական ֆինանսական միջոցներից:

Հիշեցնենք, որ Azdarar.am-ից դեռ 2023 թվականի դեկտեմբերին տեղեկացել էինք, որ Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործով ծանուցագիր է ստացել՝ հրավիրվելով դատախազություն:

Նաեւ Առուշանյանն այն շռայլ համայնքի ղեկավարն է, ով գնել է 000 OO 00 գոլդ համարանիշը:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի էր դարձել, որ համարանիշները ձեռք է բերվել «Առանցք» ՍՊԸ-ի կողմից: Ուսումնասիրության արդյունքում ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրից տեղեկացել էինք, որ «Առանցք» ՍՊԸ-ն պատկանում է Գագիկ Սամվելի Առուշանյանին, ով ՍՊԸ-ի տնօրենն է:

Ըստ ՀՀ ընտրողների պետական ռեգիստրի՝ Գագիկ Առուշանյանը բնակվում է Սյունիքի մարզի Գորիս համայնքում եւ գրանցված է նույն հասցեում, որտեղ գրանցված է նաեւ Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանը, այսինքն՝ Գագիկ Առուշանյանը համայնքապետի հայրն է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ համարանիշները գրանցված են Mercedes-benz G63 AMG 4.0 մեքենայի վրա:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՆԿԱՐԱՅԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ

Անկարան ողջունում է Բաքվի եւ Երեւանի միջեւ բանակցություններում առաջընթացը եւ ակնկալում է խաղաղության պայմանագրի շուտափույթ ստորագրում: Այդ մասին հայտարարել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանը Բաքվի էներգետիկ շաբաթվա բացման արարողության մասնակիցներին ուղղված ուղերձում:

Թուրքիայի նախագահը շնորհավորել է Ադրբեջանին ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի կողմերի համաժողովի 29-րդ նստաշրջանը (COP 29) հյուրընկալելու կապակցությամբ:

«Թուրքիան պատրաստ է ցանկացած աջակցություն ցուցաբերելու Ադրբեջանին այդ միջոցառման անցկացման հարցում»,- ասված է ուղերձում, որն ընթերցել է երկրի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Ալփարսլան Բայրաքթարը:

Էրդողանի ուղերձում նաեւ նշվում է, որ Անկարայի եւ Բաքվի համագործակցությունը էներգետիկ ոլորտում օգուտ կբերի ամբողջ տարածաշրջանին: Նա ընդգծել է, որ երկու երկրների կապերն ամուր են բոլոր ոլորտներում:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ե՛վ Հայաստանը, եւ՛ Ադրբեջանը միմյանց սահմանադրություններում խոչընդոտներ են տեսնում երկարատեւ խաղաղության հաստատման համար, սակայն դրանցում փոփոխություններ անելու հարցը երկու երկրների բանակցությունների օրակարգի մաս չի կազմում:

Այս մասին ասաց Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության քննարկմանը՝ անդրադառնալով ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Ռուստամյանի հարցին:

«Ե՛վ Ադրբեջանը, եւ՛ Հայաստանը բարձրաձայնել են դիրքորոշում՝ համաձայն որի յուրաքանչյուրը մյուսի Սահմանադրության մեջ էական խնդիրներ եւ խոչընդոտներ է տեսնում երկարատեւ խաղաղության հաստատման համար: Սա ամենեւին չի նշանակում, որ, օրինակ, Հայաստանում սահմանադրական փոփոխությունների հարցը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բանակցությունների առարկա է կամ օրակարգի մաս, այդպիսի բան չկա», - ասաց ԱԳ նախարարը:

Նա հավելեց՝ համոզմունք ունեն, որ եւ՛ Հայաստանի, եւ՛ Ադրբեջանի Սահմանադրությունը մեծ հաշվով չի կարող խնդիր լինել իրավական առումով երկարատեւ խաղաղության հաստատման համար:

«Հայաստան-Ադրբեջանի բանակցությունների օրակարգի մաս ո՛չ մեր, ո՛չ իրենց Սահմանադրության փոփոխությունները չեն կազմում», - կրկնեց Միրզոյանը:

ԱԳ նախարարը հիշեցրեց, որ ՀՀ կառավարությունը Հայաստանի Սահմանադրության փոփոխության մասին խոսել է դեռ 2018 թվականից: Սա Հայաստանի գործն է, ներքին որոշելիք է:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԿԱՇԱՌՔ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԵՊՔԵՐ

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից ստացված նյութերի հիման վրա՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով կատարված նախաքննությամբ հիմնավորվել է, որ Շիրակի մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումներից մեկի ղեկավար Խ. Խ.-ն տարբեր ժամանակահատվածներում մարզպետարանի եւ Շիրակի մարզի համայնքապետարանների հետ պայմանագրեր կնքած՝ կառուցապատման ու ճանապարհաշինարարական աշխատանքներ իրականացնող մի շարք ընկերությունների ներկայացուցիչներից ստացել է ընդհանուր 1.700.000 ՀՀ դրամ կաշառք, ընդ որում, երկու դեպքում՝ մարզպետարանի մեկ այլ պաշտոնատար անձի հետ խմբի կազմում:

Նախաքննությամբ պարզվել է, որ Խ. Խ.-ն, օգտագործելով իր ծառայողական լիազորությունները, վերը նշված ընկերությունների կողմից Շիրակի մարզի տարբեր համայնքներում իրականացվող սուբվենցիոն եւ այլ ծրագրերի շրջանակում ավարտված շինարարական օբյեկտների ավարտական ակտերը ստորագրելու, վճարվելիք գումարի չափն ավելացնելու, ինչպես նաեւ կատարողական ակտերի ստորագրման եւ կնքման գործընթացներն իրականացնելու համար ինչպես անձամբ, այնպես էլ իր ղեկավարած ստորաբաժանման գլխավոր մասնագետ Մ. Ա.-ի միջոցով, 2023թ. հոկտեմբերից դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում, հիշյալ աշխատանքները կատարած ընկերությունների ներկայացուցիչներից, այդ թվում՝ նրանցից մեկի հետ փոխկապակցված՝ Արթիկի համայնքապետարանի պաշտոնյա Ա.Հ.-ից, պահանջել եւ որպես կաշառք ստացել է 100.000-ից 1.000.000 ՀՀ դրամ (ընդհանուր՝ 1.700.000 ՀՀ դրամ):

Կաշառք ստանալու համար Շիրակի մարզպետարանի պաշտոնատար անձանցից Խ. Խ.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (2 դրվագ), 435-րդ հոդված 2-րդ մասի 2-րդ կետով եւ 435-րդ հոդվածի 1-ին մասով (3 դրվագ) , իսկ Մ. Ա.-ին՝ 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (2 դրվագ): Վերջիններիս կաշառք տված ընկերությունների 6 ներկայացուցիչներին էլ մեղադրանքներ են ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասով եւ 436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Նախաքննության ընթացքում հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի միջնորդությունների հիման վրա՝ Խ. Խ.-ի, Մ. Ա.-ի եւ Ա. Հ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, որը հետագայում, դատարանի որոշմամբ, փոխարինվել է տնային կալանքով:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան՝ ըստ էության քննվելու համար:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՅՐԸ ՎՆԱՍԵԼ Է ԻՆՔՆ ԻՐԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հունիսի 3-ին ուշագրավ դեպք է եղել Գյումրիում: Ժամը 20:55-ին 1960 թվականին ծնված Գ.Հ.-ն, իմանալով, որ պայմանագրային զինծառայող որդուն խմածության համար աշխատանքից ազատել են, դանակով վնասել է դաստակները:

Վերջինիս շտապ տեղափոխել են հիվանդանոց, կյանքին վտանգ չի սպառնում:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՅՈՒՅՑԻ 19–ԱՄՅԱ ՄԱՄՆԱԿԻՑԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչությունում ավարտվել է ոստիկանության ծառայողի օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու նպատակով նրա նկատմամբ բռնություն գործադրելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Իրականացված ապացուցողական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ 2024թ. մայիսի 10-ին՝ ժամը 10:50-ի սահմաններում, մի խումբ քաղաքացիներ, Երեւան-Մեղրի միջպետական նշանակության ավտոճանապարհի 125-րդ կմ հատվածում երթեւեկության մասնակիցների համար խոչընդոտ ստեղծելով, տրանսպորտային միջոցները կայանել են ճանապարհի երթեւեկելի մասում՝ այդ կերպ իրականացնելով անհնազանդության ակցիա:

Այդ ընթացքում ոստիկանության ծառայողները միջպետական նշանակության ավտոճանապարհին իրականացրել են հասարակական կարգի պահպանություն, ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման նպատակով ապահովել միջպետական ճանապարհով տրանսպորտային միջոցների անխափան երթեւեկությունը: Ոստիկանության ծառայողները, ունենալով իրենց լիազորությունների իրականացմանը խոչընդոտող գործողությունները դադարեցնելու պահանջ ներկայացնելու իրավունք, նշված տեղանքում ճանապարհային երթեւեկությունը կարգավորելու նպատակով պահանջել են երթեւեկության մասնակիցների համար խոչընդոտ ստեղծող վայրերում կանգնած տրանսպորտային միջոցները հեռացնել, ինչին ի պատասխան՝ բողոքի ակցիային մասնակցող վարորդները հրաժարվել են այդ պահանջները կատարել, եւ երբ ոստիկանության ծառայողներից մեկը փորձել է «Վազ Պրիորա» մակնիշի տրանսպորտային միջոցի ձեռքի արգելակն իջեցնելու միջոցով այն դուրս բերել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ ազատել այն, բողոքի ակցիայի մասնակիցների եւ ոստիկանների միջեւ սկսվել է քաշքշուկ, որի ընթացքում ակցիայի մասնակիցներից մեկը՝ Վայք քաղաքի 19-ամյա բնակիչը, հարվածներ է հասցրել ոստիկանության նշված ծառայողի մեջքի շրջանին եւ քաշքշել նրան՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա երիտասարդին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 3-րդ մասով: Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը՝ 2 ամիս ժամանակով: Նախաքննությունն ավարտվել է, վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են հսկողություն իրականացնող դատախազին:

ՔԱՇՔՇՈՒԿ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԵՂԲՈՐ ԵՎ ՊԱՐԵԿԻ ՄԻՋԱԴԵՊԸ

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել են Կապան քաղաքի երկու բնակիչներ Գ.Փ.-ի եւ Մ.Հ.-ի կողմից ոստիկանության աշխատակիցների օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու դեպքի հանգամանքները:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով՝ հիմնավորվել է, որ 2024թ. մարտի 10-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցները, «Շկոդա» մակնիշի ավտոմեքենայով գիշերային հերթափոխով ծառայություն իրականացնելիս ժամը 04:30-ի սահմաններում, ձայնային եւ լուսային ազդանշանով կանգնելու հրահանգ են տվել Գ.Փ.-ի անվամբ հաշվառված, մեկ այլ անձի կողմից վարած «Toyota LC 150 4.0 GAS» մակնիշի ավտոմեքենային, սակայն վերջինս շարունակել է վարել ավտոմեքենան եւ կայանել է Կապան քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցում գտնվող առանձնատան դիմաց: Դրանից հետո պարեկային ծառայողները մոտեցել են նշված ավտոմեքենային, որից իջել են վարորդը եւ Կապան քաղաքի վերոնշյալ բնակիչները: Պարեկները վարորդից պահանջել են ներկայացնել փաստաթղթերը, որից հետո Գ.Փ.-ն ոստիկանության ծառայողի օրինական ծառայողական գործունեությանը՝ վարորդի փաստաթղթերը եւ նրա սթափության վիճակը ստուգելուն միջամտելու նպատակով՝ քաշել եւ պոկել է պարեկային ծառայության աշխատակցի համազգեստին ամրացված, վերջինիս հսկողության տակ գտնվող տեսագրող սարքը եւ նետել փողոցում՝ վնասելով այն:

Այդ ընթացքում Մ.Հ.-ն սպառնացել է վնասել պարեկներին ծառայողական նպատակներով հատկացված «Շկոդա» մակնիշի ավտոմեքենան, ապա բռնել է նրանցից մեկի համազգեստից, քաշքշել, հարվածել նրա գլխարկին, ինչպես նաեւ հրել է մյուս պարեկին:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Կապան քաղաքի հիշյալ բնակիչներից մեկին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 2-րդ մասով, մյուսին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 1-ին մասով: Նրանցից մեկի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել գրավը, մյուսի նկատմամբ՝ բացակայելու արգելքը:

Նախաքննությունն ավարտվել է, քրեական վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

Քննչական կոմիտեն չէր բացահայտել, թե ով է Գ.Փ.-ն, սակայն «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ նա Կապանի քաղաքապետ Գեւորգ Փարսյանն է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 3-ից 4-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 50 դեպք, որից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԴՐՈՇ ՏՆԿՎԵՑ

Տավուշի մարզպետարանը հայտնում է, որ մայիսի 29-ին տեղի է ունեցել Տավուշի գյուղատնտեսական զարգացման ծրագրի ղեկավար կոմիտեի նիստ, որին մասնակցել են Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը, Ֆրանսիայի Օ-դը-Սեն դեպարտամենտի նախագահ Ժորժ Սիֆրեդին, Ֆրանսիայից ժամանած դեպարտամենտի խորհրդի անդամներն ու այլ աշխատակիցներ, Տավուշի մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների մի շարք ղեկավարներ, Իջևան, Դիլիջան, Բերդ եւ Նոյեմբերյան համայնքների ղեկավարները, այլ հյուրեր: Նիստում Տավուշի մարզի «Զբոսաշրջության զարգացման գործակալություն» ՀԿ-ի նախագահ Սոս Խաչիկյանը ներկայացրել է Կիրանց բնակավայրի տնտեսական զարգացման նախագիծը, ինչի շուրջ եղել է ակտիվ քննարկում: 6,5 հեկտար տարածք սահմանազատման անվան տակ Ադրբեջանին են հանձնել հողեր, Կիրանցի բնակիչներին պատկանող, կադաստրից տրված 52 սեփականության վկայական կեղծ են համարել, Կիրանց գյուղի բարձունքում տնկվել է ադրբեջանական դրոշը, հիմա Կիրանցի տնտեսական զարգացման նախագիծ են քննարկում: Կիրանցի բնակիչներն ապամոնտաժել են Կիրանցի խորհրդանիշ արծիվը. եթե բնակիչները այն չպոկեին, ադրբեջանցիներն այն կպոկեին եւ դրանից շոու կսարքեին: Կիրանցի դաշտեր ձգվող, գյուղի 30 հեկտար ցանված հացահատիկի ցանքեր տանող միակ ճանապարհը հանձնվել է Ադրբեջանին: Կիրանցի նորակառույց դպրոցի աշակերտներն կրթօջախի պատուհաններից տեսնելու են ադրբեջանցի ասկյարներին. քանի՞ մարդ է իր երեխային Կիրանցի դպրոց ուղարկելու: Կիրանցում քանի՞ բնակիչ է մնալու, որ գյուղը տնտեսապես զարգացնի: ՔՊ-ական իշխանությունը ձե՞ռք է առնում հերոսական տարեգրություն ունեցող Կիրանցի բնակիչներին:

ԵՐԹԵՎԵԿՈՒՄ ԵՆ ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԶԻՆՅԱԼՆԵՐԻ ԴԵՄ–ԴԻՄԱՑՈՎ

Մայիսի 23-ից փակ էր միջպետական ավտոճանապարհի Ոսկեպար-Բաղանիս հատվածը, որը ձգվում էր սահմանագոտով: Այդ պատճառով երթեւեկը կատարվում էր Ոսկեպար-Բաղանիս շրջանցիկ՝ Հարսնաքարով ձգվող ավտոճանապարհով: Մայիսի 26-ի ջրհեղեղից Ալավերդիով ձգվող միջպետական ավտոճանապարհը քանդված է, ուստի Հարսնաքարով ձգվող շրջանցիկ ճանապարհը գերբեռնված էր աշխատում, այդ պատճառով էլ շրջանցիկ ճանապարհին մոտ 15 փոսեր էին առաջացել: Արդեն 3 օր է, ինչ բացվել է Ոսկեպար-Բաղանիս հիմնական ավտոճանապարհը, այդ ճանապարհով անցածներն ասացին, որ նախկինում ադրբեջանաբնակ Բաղանիս-Այրում գյուղի տարածքի կողքով անցնելիս ճանապարհի դիմաց նախկինում հայկական պաշտպանական դիրքերում այժմ ադրբեջանցի զինյալներն են տեղավորված, միջպետական ճանապարհով անցնողներն ադրբեջանցի զինյալներից ուղիղ գծով մոտ 100 մետր հեռավորությամբ են անցնում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

ՍՏԵՂԾԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՀՈՍՔԸ

Երեւանի քաղաքապետարանը ստեղծել է նոր ծրագիր, որը նախատեսում է հասցեագրել ժամանակակից ստեղծագործողների խնդիրները՝ ինքնաարտահայտման, միջոլորտային կապերի հաստատման, գիտելիքի եւ հմտությունների ձեռքբերման հնարավորություն տալով: Ստեղծագրության ակադեմիա ծրագրի մեկնարկը կտրվի հուլիսին: Ծրագրի շրջանակում տարատեսակ միջոցառումներ կիրականացվեն բանաստեղծների, արձակագիրների, դրամատուրգների, սցենարիստների եւ արվեստի քննադատների համար:



Ծրագիրը բաղկացած է մի քանի փուլերից: Ընդհանուր առմամբ հինգ անվանակարգերի համար (բանաստեղծություն, արձակ, դրամատուրգիա, կինոսցենար, արվեստի քննադատություն) հայտարարվում է ընդունելության մրցույթ մինչեւ հունիսի 15-ը, որին կարող են դիմել 18 տարեկանից բարձր ՀՀ քաղաքացիություն ունեցող բոլոր ցանկացողները: Խմբերի ձեւավորումից հետո ոլորտի առաջատար մասնագետները դասընթացներ կմատուցեն ուսանողներին, որոնց կշնորհվի մասնակցության վկայագրեր:

Դասընթացները բաղկացած են լինելու 10 մասից:

Դասընթացներից հետո շրջանավարտները հնարավորություն կունենան մասնակցելու սույն ծրագրի շրջանակում հայտարարվող մրցույթին: Յուրաքանչյուր անվանակարգի հաղթողին կհատկացվի դրամական պարգեւ եւ որ ամենակարեւորն է, նրանց հայտերի հիման վրա կտպագրվեն գրքեր, կնկարահանվեն ֆիլմեր եւ կիրականացվեն բեմադրություններ:

«Հատկանշական է, որ ծրագրի շրջանակում մինչեւ 150 մասնակից կստանա անվճար դասընթացների մասնակցելու հնարավորություն: Յուրաքանչյուր անվանակարգում ներառված են 3 անվանի մասնագետներ:

Շրջանավարտների մրցույթի մրցանակային ֆոնդը կազմում է 3 միլիոն ՀՀ դրամ: Լավագույն աշխատանքների հիման վրա կտպագրվի պատկերազարդ գիրք, կնկարահանվի ֆիլմ, կբեմադրվի թատերական ներկայացում», - նշում են Ակադեմիայի նախաձեռնողները:

Ակադեմիայի մասնակցության վկայական ստանալու համար անհրաժեշտ է, որպեսզի մասնակիցը ներկա գտնվի 10 դասընթացներից առնվազն 8-ին: Վկայագիր ստանալուց հետո՝ մասնակիցը կարող է դիմել այս ծրագրի շրջանակում անցկացվող դրամաշնորհին:

Ստեղծագրական մրցույթը կանցկացվի բոլոր 5 անվանակարգերում: Հաղթողները կընտրվեն հանձնաժողովի կողմից:

Դասընթացները կամփոփվեն գալա համերգով, որը նախատեսված է սեպտեմբերին: Համերգային ծրագրի ավարտից հետո հաղթող հայտատուների աշխատանքները կուղարկվեն պատկերազարդողներին, կինոռեժիսորներին, բեմադրիչներին՝ տեսլական ստանալու նպատակով:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

Սանահին կայարանից մինչեւ Այրում կայարան երկաթուղային ենթակառուցվածքի վնասված 8 հատվածներից երկուսում գնացքների երթեւեկությունը վերականգնվել է: Երթեւեկությունը դեռեւս սահմանափակ է արագությամբ եւ շարժակազմի տեսակով:

Ներկայումս իրականացվում է Ալավերդի-Հաղպատ ճանապարհի փլուզված հատվածի մաքրում՝ քանդված կառույցների պայթեցման եւ ապամոնտաժման միջոցով, տարածքների մաքրման եւ շինարարական տեխնիկայի համար մուտքի ճանապարհներ կառուցելու ուղղությամբ լայնածավալ աշխատանքներ են իրականացվում: Ավերված հատվածներից մեկի վրա կառուցվում է սանդղավանդ:

Ախթալա կայարանում ավարտվել են 230 մետր երկարությամբ էլեկտրահաղորդման գծի, ինչպես նաեւ 400 մետր երկարությամբ կապի հենարանների եւ մալուխների վերականգնման աշխատանքները: Իրականացվել է նաեւ կայանի հատակի սարքավորումների ապամոնտաժում եւ լվացում կեղտից:

Ավարտվել է կայանի արտաքին սարքավորումների կեղտից մաքրումը եւ վնասված ավտոմատացման սարքերի ապամոնտաժումը:

Միեւնույն ժամանակ, մատակարարվում են նյութեր եւ սարքավորումներ արտերկրից, պայմանագրեր են կնքվել, քարի մատակարարումներ են իրականացվում տարբեր քարհանքերից:

Այրում կայարանում ընթանում են նախապատրաստական աշխատանքներ եւ ներմուծվում են նյութեր եւ սարքավորումներ՝ նավթամթերքների ընդունմանը նախապատրաստվելու նպատակով: Նախատեսվում է, որ Այրում կայարանի բազայի հիման վրա կկազմակերպվի Հայաստան բեռների ներկրման ժամանակավոր սխեմա:

Ընդհանուր առմամբ վերականգնման աշխատանքներում ներգրավվել է «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության 265 աշխատակից: Ռուսաստանից գործուղված աշխատակիցների ընդհանուր թիվը կազմում է ավելի քան 30 մարդ:

«Վրացական երկաթուղիներ» ընկերությունից սպասվում են եւս մի քանի մասնագետներ:

Միեւնույն ժամանակ ընկերության մանեւրային ջերմաքարշը շարունակում է տեխնիկա եւ մարդկանց տեղափոխել ճանապարհներից կտրված Քարկոփ, Ճոճկան, Մեծ Այրում եւ Փոքր Այրում բնակավայրեր:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԱՊԱՀՈՎՈՒՄ՝ ԲՆԱԿԱՐԱՆՈՎ

Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը Ճամբարակի համայնքապետարանում հանդիպում է ունեցել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների ներկայացուցիչների հետ:

Ջանիկ Բազեյանը Ճամբարակում վերաբնակություն հաստատած արցախցիներին ներկայացրել է ՀՀ կառավարության կողմից հաստատված բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի մանրամասները՝ շեշտելով, որ այս ծրագրի ընդունմամբ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքները հնարավորություն կունենան առաջիկա մի քանի տարիների ընթացքում լուծել իրենց բնակարանային խնդիրները բացառապես պետական միջոցներով:

Ծրագիրը կիրականանա մի քանի փուլերով եւ սահմանված գոտիականությամբ:

Երրորդ գոտում, որտեղ ընդգրկված են մարզի 39 բնակավայրեր, բնակարան ձեռք բերել կամ կառուցել ցանկացող ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետությունից աջակցություն կստանա 5 միլիոն դրամի չափով:

Ճամբարակ համայնքում երրորդ գոտում ընդգրկված են բոլոր բնակավայրերը՝ բացառությամբ Շողակաթ ու Դրախտիկ բնակավայրերի, որոնք ընդգրկված են երկրորդ գոտում:

Այստեղ բնակարան կառուցել կամ ձեռք բերել ցանկացողներին պետական աջակցություն կտրամադրվի 4 միլիոն դրամի չափով:

Մարզի մնացած բնակավայրերի համար, որոնք ընդգրկված են առաջին գոտում, կտարամադրվի 3 միլիոն դրամ:

Կառավարության որոշմամբ՝ սահմանված են նաեւ ծրագրով հատկացված գումարի դրական մնացորդի ծախսման ուղղությունները, որոնք օգտագործվելու են հողամասի ձեռքբերման, բնակարանի նորոգման ու կահույքի, այլ կենցաղային իրերի ձեռքբերման նպատակով:

Ծրագրի ֆինանսավորումն իրականացվելու է գործընկեր բանկերի կողմից:

Ծրագրի մաքսիմալ արժեքը կազմում է 55 միլիոն դրամ:

Ծրագրից օգտվելու համար շահառուներին կտրվի բնակարանի ձեռքբերման կամ կառուցման սերտիֆիկատ եւ հիպոթեկային վարկավորում:

ԻՐԱՆԸ ՀԱՅՏ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի ղեկավար Բակիտժան Սագինտաեւը տեղեկացրել է, որ Իրանը ԵԱՏՄ դիտորդ երկրի կարգավիճակ ստանալու հայտ է ներկայացրել:

Բելառուսի վարչապետ Ռոման Գոլովչենկոն անհրաժեշտ է համարում երկրների եւ տարածաշրջանային առեւտրային միավորումների ցուցակի ստեղծումը, որոնց հետ ԵԱՏՄ-ն նպատակահարմար է, որ սկսի համաձայնագրեր կնքել ազատ առեւտրի գոտու մասին:

ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի հաջորդ նիստը կկայանա սեպտեմբերի վերջին:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Windows-Ի ԾՈՐԹԻՉ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

«Կասպերսկի» ընկերության Կիբեռմիջադեպերին արձագանքման գլոբալ թիմի (Kaspersky GERT) փորձագետները BitLocker-ն օգտագործող նոր շորթող ծրագրի միջոցով կորոնորատիվ սարքերի վրա գրոհներ են հայտնաբերել: Սա Windows-ի անվտանգության գործառույթ է, որը թույլ է տալիս պաշտպանել տվյալները ծածկագրման միջոցով: Վնասաբեր ծՍ-ն ստացել է ShrinkLocker անվանումը:

Ընկերությունը հայտնում է, որ չարագործները վնասակար սկրիպտ են ստեղծել VBScript-ով՝ ծրագրավորման լեզվով, որն օգտագործվում է Windows-ով աշխատող համակարգիչներում գործընթացներն ավտոմատացնելու համար: Այդ սկրիպտը ստուգում է, թե Windows-ի որ տարբերակն է տեղադրված սարքում, եւ ըստ այդմ ակտիվացնում է BitLocker-ի գործառույթը: Վնասաբեր ծրագիրը կարող է վարակել ՕՀ-ի ինչպես նոր, այնպես էլ հին տարբերակները՝ ընդհուպ մինչեւ Windows Server 2008-ը:

Սկրիպտը փոխում է ՕՀ-ի գործարկման պարամետրերը, այնուհետեւ փորձում ծածկագրել կոշտ սկավառակի բաժինները BitLocker-ի միջոցով: Ստեղծվում է բեռնման նոր բաժին՝ հետագայում ծածկագրված համակարգիչը գործարկելու հնարավորություն ունենալու համար: Չարագործները նաեւ հեռացնում են անվտանգության գործիքները, որոնք օգտագործվում են BitLocker-ի ծածկագրման բանալին պաշտպանելու համար, որպեսզի հետագայում օգտատերը չկարողանա վերականգնել դրանք:

Հաջորդիվ վնասաբեր սկրիպտը չարագործների սերվեր է ուղարկում համակարգի մասին տեղեկատվությունը եւ վարակված համակարգչում գեներացված ծածկագրման բանալին: Դրանից հետո այն «մաքրում է հետքերը». հեռացնում է լոգերը եւ տարբեր ֆայլեր, որոնք կարող են օգնել գրոհի հետազոտմանը:

Վերջնական փուլում վնասաբեր ծրագիրը հարկադրաբար արգելափակում է հասանելիությունը համակարգին: Զոհը էկրանին տեսնում է հաղորդագրություն. «Ձեր համակարգչում BitLocker-ը վերականգնելու տարբերակներ չկան»:

«Կասպերսկի» ընկերության փորձագետները վնասաբեր սկրիպտին տվել են ShrinkLoՁker անվանումը (անգլ. shrink՝ փոքրացնել): Գրոհների ժամանակ առանցքային դեր է խաղում կոշտ սկավառակի բաժինների պարամետրերի փոփոխությունը. դա չարագործների համար ապահովում է ծածկագրված ֆայլերով համակարգը գործարկելու հնարավորություն:

«Գրոհների համար օգտագործվել է BitLocker-ը՝ գործիք, որն ի սկզբանե ստեղծվել է տվյալներին չարտոնված հասանելիությունը կանխելու համար: Պաշտպանական գործիքը զենք է դարձել չարագործների ձեռքում: BitLocker օգտագործող ընկերություններին անհրաժեշտ է օգտագործել հուսալի գաղտնաբառեր եւ ապահով պահել հասանելիությունը վերականգնելու բանալիները: Կարեւոր է նաեւ կազմակերպել կարեւոր տվյալների պահուստային կրկնօրինակումը: Խորհուրդ ենք տալիս օգտագործել MDR կամ EDR դասի լուծումներ վաղ հայտնաբերման համար եւ, իհարկե, հետաքննել բոլոր միջադեպերը՝ գրոհի սկզբնական վեկտորը հայտնաբերելու եւ ապագայում նմանատիպ միջադեպերի կրկնությունը բացառելու համար»,- մեկնաբանում է «Կասպերսկի» ընկերության Համակարգչային միջադեպերին արձագանքման գլոբալ թիմի ղեկավար Կոնստանտին Սապրոնովը:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ

ԲԱՆԿ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԿԱՊ

Մատնահետքով կամ պարզապես մի հայացքով ֆինանսական գործարքներ կատարելը տարիներ առաջ դժվար կլիներ պատկերացնել: Սակայն այսօր այդ ամենն արդեն իրականություն է ու մեր առօրյայի մի մասն է: Բանկի, նորագույն տեխնոլոգիաների եւ հաճախորդների միջեւ կապի, օնլայն բանկինգի զարգացման հեռանկարների, ինչպես նաեւ մարտահրավերների մասին խոսել է Ֆասթ Բանկի թվային բանկինգի տնօրեն Արթուր Հարությունյանը:

Հարությունյանը պատմել է Բանկի SS ներուժից, նշել, թե ինչ քայլեր են կատարում հաճախորդների համար նորագույն տեխնոլոգիաների ինտեգրմամբ ժամանակակից ծառայություններ առաջարկելու ուղղությամբ:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ»

ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝ - ք. Երեւան, Դավթաշեն, Դավթաշեն 4-րդ թաղամաս, 27 շենք, 41 հասցեում գտնվող 95,7 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 43200000 ՀՀ դրամ: - Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Հովսեփյան փողոց, 6ա շենք, 10 հասցեում գտնվող 126,13 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 21.06.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:

Նախավճարը վճարվում է «Բիէսթի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ

եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ

Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԳՄՍՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը երեկ ընդունել է Հայաստանում Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) նորանշանակ մշտական համակարգող եւ ՄԱԿ-ի անվտանգության հարցերով դատախանատու Ֆղանսուազ Ժակոբին:

Հանդիպմանը ներկա է եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

Ժաննա Անդրեասյանը ողջունել է հյուրին եւ շնորհավորել նշանակման ու կարեւոր հանձնառության ստանձնման առթիվ: ԿԳՄՍ նախարարը շնորհակալության է հայտնել ՄԱԿ-ի հետ տարբեր ուղղություններով երկարամյա համագործակցության համար եւ համոզմունք հայտնել՝ Ֆղանսուազ Ժակոբի նշանակմամբ արդյունավետ ծրագրերն առավել ակտիվ ընթացք կստանան: Նախարար Ժաննա Անդրեասյանը կարեւորել է նաեւ ՄԱԿ-ի տարբեր գործակալությունների եւ կառույցների միջոցով ստացվող ինստիտուցիոնալ բարեփոխումների օրակարգի հետեւողական աջակցությունը: Այս համատեքստում ԿԳՄՍ նախարարը, մասնավորապես, անդրադարձել է Պարենի համաշխարհային ծրագրի հետ համագործակցությանը՝ Հայաստանում Կայուն դպրոցական սնունդ ծրագրի իրականացման նպատակով:

«Այս համատեղ գործակցությունը տարբեր հարթակներում ներկայացվում է որպես հաջողված փորձերից մեկն առ այն, թե ինչպես կարելի է սկսել գործընկերությունը, այնուհետեւ այն ամբողջությամբ փոխանցել պետությանը: Կարեւոր է նաեւ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ համագործակցությունը՝ վաղ մանկության զարգացման եւ հանրակրթության ոլորտում բարեփոխումների իրականացման ուղղությամբ»,- նշել է ԿԳՄՍ նախարարը՝ առանձնացնելով համագործակցությունը հատկապես ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թ. զարգացման պետական ծրագրի մշակման եւ իրականացման գործընթացում:

Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) համագործակցության շրջանակում նախարարը կարեւորել է նաեւ կրթություն-աշխատաշուկա կապին նվիրված «Edu2Work» էլեկտրոնային հարթակի ստեղծումն ու դրա փոխանցումը ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը:

Ֆղանսուազ Ժակոբը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ ընդգծել՝ Հայաստանը ՄԱԿ-ի կարեւոր գործընկերներից է, եւ հատկապես կրթության ոլորտում համագործակցությունը կազմակերպության առաջնահերթություններից է: Այս համատեքստում անդրադարձ է կատարվել մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտում համագործակցության հեռանկարներին՝ տարատեսակ վերապատրաստումների, փոխանակման ծրագրերի իրականացման, ինչպես նաեւ ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ:

ԿԳՄՍ նախարարը տեղեկացրել է՝ վերջերս Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին» օրենքը, որի շուրջ աշխատանքները շուրջ 3 տարի են տեւել:

«Ընդունել ենք բոլորովին նոր օրենք, որը հնարավորություն է տալիս էապես փոխել մասնագիտական կրթության որակը մեր երկրում՝ հիմնվելով դուալ կրթության եւ աշխատանքի վրա հիմնված ուսուցման վրա: Սա մեզ համար ռազմավարական ուղղություն է», - ասել է Ժաննա Անդրեասյանը:

Կողմերը քննարկել են նաեւ մշակութային ժառանգության պահպանության, սպորտի եւ երիտասարդության ուղղություններով համագործակցության առկա իրավիճակն ու ընդգծել դրա զարգացման մեծ ներուժը՝ պատրաստակամություն հայտնելով այն առավել խորացնելու:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԱՅՑ՝ ՄԻ ՇԱՐՔ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

ԿԳՄՍ նախարարության եւ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի աշխատակիցները մշտադիտարկման հերթական այցերն են կատարել մի շարք հուշարձաններ:

Մասնագետները, մասնավորապես, այցելել են Շիրակի մարզի Մարմաշեն վանական համալիր, Պեմզաշենի վանք:

Նրանք մասնակցել են «Մարմաշեն վանական համալիրի հարակից տարածքի բարեկարգում» ենթածրագրի ավարտված շինարարական աշխատանքների ընդունող հանձնաժողովի շրջայցին:

Արված աշխատանքները հանձնաժողովի կողմից չեն ընդունվել. տրվել է ողջամիտ ժամկետ առկա թերությունները շտկելու համար:

Ծրագրով կառուցվել են Մարմաշենի վանական համալիր տանող 2,4 կմ ճանապարհը եւ հարակից ճեմուղիները, անցկացվել է ջրահեռացման եւ լուսավորության ցանց, կառուցվել են ավտոկայանատեղի, վաճառահարապարակ, սանհանգույց, բարեկարգվել են աղբյուրի հարակից տարածքը, վանքից դեպի Ախուրյան գետ իջնող աստիճաններն ու դիտահարթակը, տեղադրվել են նստարաններ, աղբամաններ, զբոսաշրջային եւ ճանապարհային ցուցանակներ:

Մարմաշեն վանական համալիրի տարածքից եւ պահպանական գոտուց ապամոնտաժվել եւ հեռացվել են մի քանի մետաղյա տաղավարներ, որոնք խաթարում էին հուշարձանի պատմական միջավայրը:

Այցի շրջանակում տեղում քննարկվել եւ հստակեցվել են Պեմզաշեն գյուղի Պեմզաշեն եկեղեցական, Սբ. Առաքելոց վանական համալիրների, Աբլղարիդ Պահլավունու խաչքարի ուսումնասիրման, պեղման, նորոգման, ամրակայման եւ տարածքի բարեկարգման գիտանախագծային փաստաթղթերի ձեռքբերման մրցույթի տեխնիկական բնութագիրը եւ պահանջները: Աշխատանքները նախատեսված են միջնաժամկետ ծախսային ծրագրով՝ 2025 թվականին:

ԿԳՄՄՆ աշխատակիցներն այցելել են նաեւ Մակարավանք, Սբ Աստվածածին (Անապատ) եկեղեցի, միջնադարյան քարայր-կացարան եւ այլ հուշարձաններ:

ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄՈՒՅԹԸ՝ Ի ՀԵՃՈՒԿՍ ԱՂԵՏԻ

Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի հրավերով՝ հունիսի 7-ին Երեւանի «Առնո Բաբաջանյան» համերգասրահում ելույթ կունենա Ալավերդու «Լազուր» ժողգործիքների համույթը (գեղարվեստական ղեկավար՝ շվիահար Սարգիս Ալեքսանյան):

Ի հեճուկս վերահաս աղետի՝ անսամբլի երաժիշտները որոշեցին, որ համերգը տեղի կունենա, նրանք կգան ու հերթական անգամ կհաստատեն, որ Լոռեցին աննկուն է անգամ ամենադժվարին պայմաններում: Նրանք կհնչեցնեն հայրենի երգն ու երաժշտությունը, որպես սփոփանք ու քաջալերում, որպես նվիրում Լոռու չքնաղ աշխարհին:

Երեկոյի ընթացքում անսամբլի երաժիշտներն ու մենակատարները հանդես կգան ազգային երաժշտության կատարումներով՝ ժողովրդական, գուսանական, հայրենասիրական երգեր, հայ կոմպոզիտորների ծանոթ եւ սիրելի ստեղծագործություններ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՎՈԼԵՅԲՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 29-ից հունիսի 2-ը ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ Աշտարակի «Սեւան մարզական ընկերության» ՄՊՄԴ մարզադահլիճում կայացել է ՀՀ վոլեյբոլի տղաների եւ աղջիկների Մ14 առաջնությունը, որին մասնակցել են տղաների եւ աղջիկների 12-ական թիմեր: Նրանք մրցել են ենթախմբերում, որից հետո կայացել են կիսաեզրափակիչ հանդիպումները: Աղջիկների պայքարում հաղթողի կոչմանն արժանացել է «Ավան» թիմը, որը եզրափակչում 2:0 հաշվով առավելության է հասել Չարենցավանի թիմի նկատմամբ: Առաջնության բրոնզե մեդալները նվաճել է Գեղաշենի թիմը՝ վճռորոշ թիմում 2:0 հաշվով հաղթելով «Աջափնյակին»: Տղաների պայքարում հաղթող է ճանաչվել «Վանաձորը», որը եզրափակչում 2:0 հաշվով ուժեղ է գտնվել «Սիսիան» թիմից: Երրորդ տեղը զբաղեցրել է «Արաբկիրը»՝ նույն հաշվով հաղթելով Նոր-Նորքի թիմին:

Մրցանակակիր թիմերը պարգեւատրվել են պատվոգրերով, մեդալներով, գավաթներով, գնդակներով, իսկ լավագույն մարզիկները՝ մրցանակներով: Առաջնության արդյունքներով կձեւավորվի Հայաստանի վոլեյբոլի Մ16 պատանեկան հավաքականը, որը կնախապատրաստվի 2025 թվականին Երեւանում կայանալիք Եվրոպայի Մ16 առաջնությանը:

ՖՈՒՏԲՈԼ

Ֆուտբոլի Հայաստանի հավաքականի ուկրաինացի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Պետրակովը ներկայացրել է ազգային թիմի վերջնական հայտացուցակը Սլովենիայի թիմի դեմ ընկերական խաղում:

Դարպասապահներ

Օգնյեն Չանչարեւիչ - «Նոա»
Արսեն Բեգլարյան - «Արարատ-Արմենիա»
Ստանիսլավ Բուչնեւ - «Փյունիկ»

Պաշտպաններ

Վարազդատ Հարոյան - «Ցինդաո Ուեստ Քոսթ» (Չինաստան)
Նաիր Թիկնիզյան - «Լոկոմոտիվ» (Մոսկվա, Ռուսաստան)
Ստյոպա Մկրտչյան - «Օսիեկ» (Խորվաթիա)
Կամո Հովհաննիսյան - «Արարատ-Արմենիա»
Գեորգի Հարությունյան - «Կրասնոդար» (Ռուսաստան)
Անդրանիկ Հակոբյան - «Վալենսիա Մ-19» (Իսպանիա)
Դավիդ Դավիդյան - «Փյունիկ»
Էրիկ Սիմոնյան - «Ուրարտու»
Սերգեյ Մուրադյան - «Նոա»
Էդգար Գրիգորյան - «Արարատ-Արմենիա»

Կիսապաշտպաններ/Հարձակվողներ

Էդուարդ Սպերցյան - «Կրասնոդար» (Ռուսաստան)
Տիգրան Ավանեսյան - «Բալթիկա» (Ռուսաստան)
Էդգար Սեւիկյան - «Ֆերենցվարոշ» (Հունգարիա)
Վահան Բիչախչյան - «Պոգոն» (Լեհաստան)
Արտակ Դաշյան - «Նոա»
Հովհաննես Հարությունյան - «Փյունիկ»
Սոլոմոն Ուդո - «Փյունիկ»
Գեւորգ Տարախչյան - «Ուրարտու»
Ժիրայր Շաղոյան - «Արարատ-Արմենիա»
Արթուր Սերոբյան - «Արարատ-Արմենիա»
Գոռ Մանվելյան - «Նոա»
Արթուր Միրանյան - «Նոա»:

● *Հունիսի 13-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Խենթը» ներկայացումը՝ Ռաֆֆու համանուն վեպի հիման վրա: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ կուսակցության առաջին համագումարները երբ եւ ինչպես պետք է գումարել: Հետաքրքիր է՝ ինչ չափանիշներ, պահանջներ ու արգելքներ կան:

Կարապետ Մուրադյան (36 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ կուսակցության հիմնադիր համագումարը որոշումներ է ընդունում կուսակցության ստեղծման, կուսակցության ծրագրի ընդունման եւ կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման մասին, ինչպես նաեւ իր կազմից ընտրում է մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավար (կամ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար): Կուսակցության ստեղծման մասին որոշումն ընդունվում է կուսակցության հիմնադիր համագումարին ներկա առնվազն 100 հիմնադրի միաձայն որոշմամբ: Կուսակցության ծրագրի եւ կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների ձեւավորման մասին որոշումներն ընդունվում են կուսակցության հիմնադիր համագումարին ներկա հիմնադիրների ձայների մեծամասնությամբ: Հիմնադիր համագումարի կազմակերպիչները հիմնադիր համագումարի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակում են կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման ժամանակի եւ վայրի մասին ծանուցում, ինչպես նաեւ կուսակցության կանոնադրության եւ ծրագրի նախագծերի հիմնական դրույթները:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ կուսակցության՝ որպես իրավաբանական անձի իրավունակությունը ծագում է պետական գրանցման պահից, այսինքն՝ որպես սուբյեկտ՝ կուսակցությունը սկսում է իր գործունեությունը, ձեռք բերում իրավունքներ գրանցման պահից:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ երբ է մերժվում կենսաթոշակ նշանակելը:

Հայկուհի Պետրոսյան (60 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշում կայացվում է, եթե՝

- անձը չունի կենսաթոշակի իրավունք,
- կենսաթոշակի իրավունք ունեցող անձը, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով,
- ներկայացված փաստաթղթերը եւ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները բավարար չեն անձին կենսաթոշակ նշանակելու համար:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Շունը, կարծես թե, լավ գիտի քաղաքավարության կանոնները: Նախ՝ նա որոշել է երթուղայինով հասնել իրեն անհրաժեշտ վայրը, եւ հետո՝ դեռ մի բան էլ հատակին է հարմարվել՝ քաղաքացիներին նստելու տեղ տալու համար:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 8 + 12 +22 + 26
Կոտայքի լեռներ	+ 8 + 12 +23 + 26
Կոտայքի նախալեռներ	+ 15+ 17 +28 + 30
Գեղարքունիք	+ 10+ 13 +21 + 24
Լոռի	+ 9 + 13 +24 + 27
Տավուշ	+ 15+ 17 +28 + 31
Արագածոտնի լեռներ	+ 9 + 13 +21 + 24
Արագածոտնի նախալեռներ	+ 15+ 18 +28 + 31

Արարատ	+ 16 + 18 +31 + 33
Արմավիր	+ 16+ 18 +31 + 33
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 11 +22 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+ 16 + 18 +31 + 33
Սյունիքի հովիտներ	+ 18 + 22 +29 + 32
Սյունիքի նախալեռներ	+ 13 + 15 +25 + 28
ԼՂՀ	+ 13 + 14 +25 + 26
Երեւան	+ 23 + 25 + 29 + 31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.6.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, վ. Դավթաշենական 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*